

Պահատուփ

(ֆիզիկական անձ հաճախորդների համար սույն պայմանները գործում են որպես «Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմանների»¹ **Հավելված 9**)

*Ընդունվել է Բանկի Տնօրինության 03.05.2016թ. թիվ 02/01/16 որոշմամբ,
սույն խմբագրությունը՝ 24.12.2025թ. թիվ 01/33/25 որոշմամբ, և ուժի մեջ է 16.03.2026թ.:*

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ **Բանկ**) անհատական պահատուփի պայմանները (այսուհետ՝ **Պահատուփի պայմաններ**) սահմանում են անհատական պահատուփից (այսուհետ՝ **Պահատուփ**) օգտվող հաճախորդ(ներ)ի (այսուհետ՝ **Հաճախորդ**, իսկ **Բանկը** և **Հաճախորդը** միասին՝ **Կողմեր**) և **Բանկի**՝ որպես պահատվության ծառայության մատուցողի փոխհարաբերությունների պայմանները, ինչպես նաև **Պահատուփի** օգտագործման կանոնները:
- 1.2. **Բանկի** կողմից պահատվության ծառայություն կարող է մատուցվել 18 տարեկանը լրացած ֆիզիկական անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերին:
- 1.3. Սույն պայմանների հասկացությունները ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվելու պարագայում ունեն նույն իմաստն ու նշանակությունը, ինչ «Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմաններում»¹:
- 1.4. **Պահատուփի պայմանները** գործում են ի լրումն «Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմանների»¹, «Բանկի կողմից իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատեր) բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների»², ընդ որում **Պահատուփի պայմաններով** չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են սույն կետում նշված պայմաններով, **Բանկի** ֆիզիկական և իրավաբանական անձանց համար գործող սակագներով (այսուհետ՝ **Սակագներ**), **Կողմերի** միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով և **Օրենսդրությամբ**, իսկ **Օրենսդրությամբ** կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:

2. Պահատուփի տրամադրում

- 2.1. **Բանկը Հաճախորդին** տրամադրում է **Պահատուփ**՝ **Բանկի** սահմանած ձևանմուշով **Հաճախորդի Բանկ** ներկայացրած հայտ-պայմանագրի (այսուհետ՝ **Հայտ-պայմանագիր**) հիման վրա, որով **Հաճախորդը** հաստատում է **Պահատուփի պայմանների** ընդունումը (ակցեպտավորումը):
- 2.2. **Պահատուփից** օգտվելու վերաբերյալ **Հաճախորդի Հայտ-պայմանագրով** ներկայացված նախընտրությունների հետագա փոփոխությունների հանձնարարականը (**Բանկի** սահմանած ձևանմուշով) **Բանկը** կատարում է **Բանկի** կողմից սահմանված կարգով, և այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչ այդ նույնանման հարցին վերաբերող հանձնարարականները համարվում են ուժը կորցրած:

¹ Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմաններ (11RBD PL 72-01-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

² «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերին) բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ (11RBD/12CIB RL 72-01-02), ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

- 2.3. Միննույն **Պահատուփի** համար **Հայտ-պայմանագիր** կարող են ներկայացնել մեկից ավել (առավելագույնը՝ երկու) **Հաճախորդներ**: Այս դեպքում **Հաճախորդները** համատեղ համաձայնությամբ **Հայտ-պայմանագրում** սահմանում են **Պահատուփի** տնօրինման կարգը, որը դիտվում է որպես **Հաճախորդի** կողմից **Բանկին** տրված հանձնարարական և կարող է լինել հետևյալ տարբերակներից մեկը՝
- 2.3.1. **Պահատուփը** տնօրինում են համատեղ **Հայտ-պայմանագիրը** ներկայացրած **Հաճախորդներից** յուրաքանչյուրը առանձին և առանց որևէ սահմանափակման, և այս դեպքում **Հաճախորդներից** յուրաքանչյուրն առանձին իրավունք ունի կատարել **Պահատուփի** հետ կապված ցանկացած գործողություն, ներառյալ՝ **Հայտ-պայմանագրով** ներկայացված նախընտրությունների հետագա փոփոխությունները և պահատվության ծառայության դադարեցումը,
- 2.3.2. **Պահատուփը** տնօրինում են համատեղ **Հայտ-պայմանագիրը** ներկայացրած **Հաճախորդները** միասին՝ ընդհանուր համաձայնությամբ, և այս դեպքում **Հաճախորդներից** յուրաքանչյուրի համաձայնությունը պարտադիր է **Պահատուփի** հետ կապված ցանկացած գործողության համար, ներառյալ՝ **Հայտ-պայմանագրով** ներկայացված նախընտրությունների հետագա փոփոխությունները և պահատվության ծառայության դադարեցումը:

3. Պահատուփի սպասարկում

- 3.1. **Պահատուփից** օգտվելու համար **Բանկը Հաճախորդին** տրամադրում է **Պահատուփի** բանալին: **Պահատուփը** փակվում է 2 բանալիով, որոնցից մեկը **Բանկը** տրամադրում է **Հաճախորդին** (համատեղ օգտագործվող **Պահատուփի** դեպքում ևս տրամադրվում է 1 բանալի՝ համատեղ օգտագործման համար), իսկ մյուսը պահվում է **Բանկում**: **Պահատուփը** հնարավոր է բացել 2 բանալիների միաժամանակ կիրառմամբ:
- 3.2. **Պահատուփից** օգտվելու/ բացելու և **Պահատուփի** պարունակությունը տնօրինելու իրավունք ունեն **Հաճախորդը** և (կամ) օրենսդրությամբ և **Բանկի** ներքին իրավական ակտերով սահմանված կարգով **Հաճախորդի** անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձը՝ **Բանկի** կողմից սահմանված գործառնական օրվա ընթացքում: **Հաճախորդը** պարտավոր է **Պահատուփից** օգտվելու համար սույն կետում նշված՝ իր անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձին տեղեկացնել **Պահատուփի պայմանների** մասին:
- 3.3. **Հաճախորդը** կարող է պահասենյակ մուտք գործել միայն **Բանկի** պատասխանատու աշխատակցի ուղեկցությամբ՝ ներկայացնելով **Պահատուփի** բանալին:
- 3.4. **Հաճախորդը**, ինչպես նաև **Հաճախորդի** անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձը իրավունք չունեն **Պահատուփից** օգտվել որևէ **Երրորդ կողմի** ուղեկցությամբ:
- 3.5. **Հաճախորդի** մասնակի կամ լրիվ իրավահաջորդության կամ ժառանգության դեպքում իրավահաջորդի կամ ժառանգի իրավունքները առաջանում են **Օրենսդրության** համաձայն:
- 3.6. **Պահատուփի** չափերը և պահատվության ծառայության ժամկետները, որոնք կարող է ընտրել **Հաճախորդը**, սահմանվում են **Սակագներում**:
- 3.7. **Հաճախորդի** կողմից **Հայտ-պայմանագրում** նշված պահատվության ծառայության ժամկետի ավարտից հետո այն երկարաձգվում է **Հայտ-պայմանագրում** նշված ժամկետով՝ **Բանկում** այդ պահին գործող **Սակագների** և **Պահատուփի պայմանների** համաձայն: Ժամկետը ենթակա է ինքնաբերաբար երկարաձգման յուրաքանչյուր անգամ ժամկետը լրանալուց հետո՝ բացառությամբ եթե **Հաճախորդը** մինչև ժամկետի լրանալու օրը (իսկ եթե ժամկետը լրանում է ոչ աշխատանքային օր, ապա՝ դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը) ներառյալ գրավոր տեղեկացրել է **Բանկին Պահատուփից** հրաժարվելու մասին, դատարկել է **Պահատուփը** (պարունակության առկայության պարագայում) և վերադարձրել բանալու իր օրինակը:
- 3.8. **Հաճախորդը** պահատվության ծառայության համար վճարում է **Բանկին՝ Սակագներով** սահմանված կարգին և **Պահատուփի պայմաններին** համապատասխան:

- 3.9. Պահատվության ծառայության **Միջնորդավճարի** առաջին վճարումը **Հաճախորդը** կատարում է **Հայտ-պայմանագրի** ներկայացման ժամանակ, իսկ հաջորդ վճարումները՝ յուրաքանչյուր երկարաձգման ժամանակահատվածի սկզբում՝ կանխավճարային կարգով:
- 3.10. **Պահատուփի** բանալու կորստի կամ վնասվելու դեպքում **Հաճախորդը** պարտավոր է ողջամիտ ժամկետում այդ մասին տեղեկացնել **Բանկին**:
- 3.11. **Բանկը Պահատուփի** բանալու կորստի կամ վնասվելու դեպքում **Հաճախորդի** ներկայությամբ փոխարինում է **Պահատուփի** կողպեքը և նոր բանալին տրամադրում **Հաճախորդին** (պարունակության առկայության պարագայում): Եթե **Հաճախորդը** հավաստում է, որ **Պահատուփը** դատարկ է, ապա դրա բացումը **Բանկն** իրականացնում է առանց **Հաճախորդի** ներկայության, իսկ տվյալ դեպքում եթե **Պահատուփը** ունի որևէ պարունակություն, ապա **Բանկն** այն գույքագրում, պահպանում և հանձնում է **Հաճախորդին**՝ համաձայն **Բանկի** ներքին իրավական ակտերի:
- 3.12. **Հաճախորդը** կարող է օգտագործել **Պահատուփը** այնպիսի գույք պահելու համար, որը սեփականության իրավունքով օրինական հիմքերով պատկանում է **Հաճախորդին**, ազատ է **Երրորդ կողմերի** իրավունքներից, որևէ սահմանափակումից կամ կալանքից: Սույն կետում նշված պահանջից բացառություն է կազմում այն դեպքը, երբ **Հաճախորդը** ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված գրավատու է և/կամ վարկային կազմակերպություն է, և այս դեպքում վերջինս կարող է **Պահատուփում** պահել միայն այնպիսի գույք, որն իր տիտղոսային տիրապետման ներքո է անցել և գտնվում է օրինական ձևով:
- 3.13. **Հաճախորդն** իրավունք չունի օգտագործել **Պահատուփը** թմրանյութ, զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր կամ սարքեր, ռադիոակտիվ նյութեր, թունաքիմիկատներ, սննդամթերք, ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի և այլ հանցավոր գործունեության հետ կապված, ինչպես նաև այլ՝ **Օրենսդրությամբ** արգելված տեսակի գույք պահելու համար:
- 3.14. **Բանկն** ապահովում է **Պահատուփի** պահպանումը հատուկ պայմաններով և անվտանգության միջոցներով հագեցված չհրկիզվող սենյակում:
- 3.15. **Բանկն** ապահովում է **Պահատուփի** պարունակության ամբողջականությունը, անվտանգությունը և իրեն հասու տեղեկատվության գաղտնիությունը՝ **Օրենսդրությամբ** սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:
- 3.16. **Պահատուփից** օգտվելու **Հաճախորդի** իրավունքը չի կարող սահմանափակվել՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.
- 3.16.1. **Օրենսդրության** համաձայն **Պահատուփի** պարունակության առգրավման/բռնագրավման դեպքում,
- 3.16.2. **Պահատուփի** պարունակության նկատմամբ **Օրենսդրության** համաձայն սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու) դեպքում,
- 3.16.3. **Կողմերի** միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով կամ **Օրենսդրությամբ** նախատեսված այլ դեպքերում:
- 3.17. **Բանկն** իրավունք ունի ստորև նշված հանգամանքներից որևէ մեկի ի հայտ գալու դեպքում, անկախ **Հաճախորդի** համաձայնությունից և ներկայությունից, բացել **Պահատուփը**.
- 3.17.1. **Օրենսդրության** համաձայն՝ իրավասու դատարանի վճռի/որոշման, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կամ պետական իրավասու այլ մարմնի որոշման հիման վրա,
- 3.17.2. Եթե կան լուրջ և հիմնավոր կասկածներ ենթադրելու, որ վտանգված է **Բանկի** անվտանգությունը և (կամ) գործունեությունը, և (կամ) **Պահատուփում** գտնվում է **Պահատուփի պայմանների** կամ **Օրենսդրությամբ** արգելված տեսակի գույք,
- 3.17.3. Եթե **Պահատուփի պայմանների** ներքո ծագած իրավահարաբերությունը **Բանկի** կողմից միակողմանի դադարեցվելու մասին **Բանկից** ծանուցում ստանալուց հետո ծանուցմամբ սահմանված ժամկետում **Հաճախորդը** չի ազատել **Պահատուփը** և բանալու իր օրինակը չի վերադարձրել **Բանկ**,

3.17.4. **Կողմերի** միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով կամ **Օրենսդրությամբ** նախատեսված այլ դեպքերում:

Բացառությամբ սույն կետի 1-ին ենթակետում նշված դեպքերի՝ **Բանկն** առանց **Հաճախորդի** ներկայության **Պահատուփի** բացման դեպքերում առկա պարունակությունը գույքագրում և պահպանում է համաձայն **Բանկի** ներքին իրավական ակտերի, ընդ որում՝ եթե **Պահատուփի** պարունակությունը վկայում է **Պահատուփի պայմանների** կամ օրենքի համաձայն որևէ տեսակի արգելված գույքի առկայություն, ապա **Բանկը** հետագա գործընթացն իրականացնում է **Օրենսդրության** համաձայն:

4. Պահատուփի դադարեցում

4.1. **Բանկն** իրավունք ունի միակողմանի դադարեցնել **Պահատուփի պայմանների** ներքո **Կողմերի** միջև իրավահարաբերությունները.

4.1.1. **Օրենսդրության** համաձայն **Պահատուփի** պարունակության առգրավման/բռնագրավման դեպքում,

4.1.2. Եթե բացահայտվում է, որ **Պահատուփում** գտնվում է **Պահատուփի պայմանների** կամ օրենքի համաձայն արգելված տեսակի գույք,

4.1.3. **Պահատուփի պայմանների** համաձայն՝ **Հաճախորդի** պարտավորությունները վերջինիս կողմից չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում՝ 10 օր առաջ այդ մասին ծանուցելով **Հաճախորդին**,

4.1.4. **Բանկի** նախաձեռնությամբ այլ դեպքերում՝ 10 օր առաջ այդ մասին ծանուցելով **Հաճախորդին**:

Բանկի միակողմանի նախաձեռնությամբ՝ **Պահատուփի պայմանների** ներքո **Կողմերի** միջև իրավահարաբերությունները ժամկետից շուտ դադարեցման դեպքում **Բանկը** վերահաշվարկում է պահատվության ծառայության համար **Հաճախորդի** կողմից վճարված միջնորդավճարը և չօգտագործված օրերի համամասնությամբ հաշվարկված միջնորդավճարի մնացորդը վերադարձնում է **Հաճախորդին**՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դադարեցման հիմքը **Հաճախորդի** կողմից իր պարտավորությունների խախտումն է:

4.2. **Հաճախորդն** իրավունք ունի միակողմանի դադարեցնել **Պահատուփի պայմանների** ներքո **Կողմերի** միջև իրավահարաբերությունները՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով **Բանկին**: Այս դեպքում իրավահարաբերությունները դադարում են այն պահից, երբ **Հաճախորդը** վճարում է **Պահատուփի** հետ կապված **Բանկի** նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ, դատարկում է **Պահատուփը** (պարունակության առկայության պարագայում) և վերադարձնում է **Պահատուփի** բանալու իր օրինակը: Ընդ որում, **Բանկը** վճարված կամ հաշվարկված **Միջնորդավճարի** վերահաշվարկ չի կատարում:

4.3. **Պահատուփի պայմանների** ներքո **Կողմերի** միջև իրավահարաբերությունների դադարեցման դեպքում **Հաճախորդը** պարտավոր է դատարկել **Պահատուփը** և բանալու իր օրինակը վերադարձնել **Բանկ**:

Խմբագրությունների մատյանⁱ

Խմբ.	Փոփոխություններ	Կազմեց	Որոշումը և ուժի մեջ մտնելու ամսաթիվը
1.	Պայմանները հաստատվել են 1-ին խմբագրությամբ		Տնօրինության 03.05.2016թ. թիվ 02/01/16 որոշում՝ Ուժի մեջ է՝ 01.06.2016թ-ից
2.	Պայմանները հաստատվել են որպես Ընդհանուր պայմանների հավելված, և առանձին գործող պայմաններ՝ Իրավաբանական անձանց համար, կատարվել են խմբագրական փոփոխություններ՝ համապատասխանեցումն ապահովելու համար: Խմբագրվեն է պահատուփի բանալին կորցնելու դեպքը, բանկը փոխարինում է հաճախորդի պահատուփի կողպեքը: Համատեղ պահատուփից կարող են օգտվել առավելագույնը երկու հաճախորդ:	Բիզնես կանոնակարգման և խորհրդատվության կենտրոնի ավագ մասնագետ Բնեսա Պետրոսյան	Տնօրինության 24.12.2025թ. թիվ 01/33/25 որոշում՝ Ուժի մեջ է 16.03.2026թ-ից:

ⁱ Սույն բաժնի տեղեկատվությունը հրապարակային չէ և օգտագործվում է միայն Բանկի կողմից: